BIOCAD Biotechnology Company

# Պացիենտի տեղեկատվական քարտ

| Ացելրիայի տեղեկատվական քարտ | Ի՞նչ պետք է իմանալ հավելյալ |
|---|---|
| **<u>Ացելրիայի տեղեկատվական քարտ</u>**<br>**Ոչ ուռուցքային հիվանդություններով բուժվող պացիենտների համար**<br><br>**Ինչու՞ են ինձ տվել այս քարտը**<br><br>Այս դեղը, որը Դուք կիրառում եք, կարող է բարձրացնել Ձեր վարակվելու հավանականությունը: Այս քարտը Ձեզ կհուշի՝<br><br>• Ինչ պետք է իմանալ մինչև Ացելրիա կիրառելը<br>• Որ նշաններն են վկայում վարակի մասին<br>• Ինչ պետք է անել, եթե կարծում եք, որ ունեք վարակ:<br>Քարտի դարձերեսին նշվում է Ձեր և Ձեր բժշկի անունը և հեռախոսահամարը<br><br>**Ի՞նչ պետք է անել այս քարտը**<br><br>• Այս քարտը միշտ Ձեզ մոտ պահե՛ք, օրինակ՝ դրամապանակում կամ պայուսակում:<br>• Ցույց տվե՛ք այս քարտը ցանկացած բժշկի, բուժքրոջ կամ ատամնաբույժի, ում այցելում եք, այլ ոչ միայն այն բժշկին, ով Ձեզ նշանակել է Ացելրիա:<br><br>Պահե՛ք այս քարտը Ացելրիա դեղի վերջին դեղաչափը ստանալուց հետո երկու տարի: Պատճառն այն է, որ կողմնակի ազդեցությունները հնարավոր է զարգանան բուժման ավարտից մի քանի ամիս անց:<br><br>**Ո՞ր դեպքերում չպետք է կիրառել Ացելրիա**<br><br>Մի՛ կիրառեք Ացելրիա, եթե ունեք ակտիվ վարակ կամ լուրջ խնդիրներ՝ կապված իմունային համակարգի հետ:<br>Տեղեկացրե՛ք ձեր բժշկին կամ բուժքրոջը, եթե ստանում եք կամ նախկինում ստացել եք դեղեր, որոնք կարող են ազդել Ձեր իմունային համակարգի վրա՝ ներառյալ քիմիաթերապիայի դեղերը:<br><br>**Որո՞նք են վարակի նշանները**<br>Ուշադրություն դարձրեք վարակի հետևյալ | **Ի՞նչ պետք է իմանալ հավելյալ**<br><br>Ացելրիան հազվադեպ կարող է հանգեցնել գլխուղեղի ախտահարման, որը կոչվում է «պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա» կամ ՊՄԼ: Այն կարող է ունենալ մահացու ելք:<br><br>ՊՄԼ-ի նշաններն են.<br>• գիտակցության մթագնում, հիշողության կորուստ կամ կոգնիտիվ խանգարումներ<br>• հավասարակշռության կորուստ, քայլելու կամ խոսելու խանգարումներ<br>• մարմնի մկանային ուժի միակողմանի նվազում կամ թուլություն<br>• տեսողության վատացում կամ կորուստ:<br>Եթե դուք ունեք թվարկած նշաններից որևէ մեկը, ապա անմիջապես տեղեկացրեք դրա մասին Ձեր բժշկին:<br><br>**Որտեղի՞ց կարող եմ ստանալ հավելյալ տեղեկություն**<br>Հավելյալ տեղեկության համար ընթերցեք Ացելրիա դեղի կիրառման հրահանգը:<br><br>**Բուժման առաջին օրը և կոնտակտային տվյալներ**<br><br>Վերջին ներարկման օրը ________________<br>Առաջին ներարկման օրը _______________<br>Պացիենտի անուն _____________________<br>Բժշկի անուն _________________________<br>Բժշկի կոնտակտային տվյալներ_________<br><br>Բժշկի այցելելիս համոզվե՛ք, որ ունեք Ձեր կողմից կիրառվող բոլոր դեղերի ցանկը՝ նրան ցույց տալու համար<br><br>Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին կամ բուժքրոջը եթե ունեք հարցեր այս տեղեկատվական քարտի վերաբերյալ: |

| | |
|---|---|
| հնարավոր նշաններին.<br>• բարձր ջերմություն կամ հազ<br>• քաշի նվազում<br>• ցավ՝ վնասվածքի բացակայության դեպքում<br>• ընդհանուր վատ ինքնազգացողություն կամ թուլություն<br>**Եթե զգում եք վերոնշյալներից որևէ մեկը, ապա անմիջապես տեղեկացրեք դրա մասին Ձեր բժշկին:**<br>Դուք պետք է նաև տեղեկացնեք բժշկին, Ացելբիա դեղով Ձեր բուժման մասին: | |